

[▶B](#)

**ԽՈՐՀՐԴԻ 1985 թվականի հունիսի 27 ՀՐԱՀԱՆԳ**

**Կոնկրետ պետական և մասնավոր նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման մասին**

(85/337/ԵՏՀ)

(ՊՏ L 175, 5.7.1985թ., էջ 40)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		թիվ	էջ	ամսաթիվ
<a href="#">▶M1</a>	Խորհրդի 1997 թվականի մարտի 3-ի 97/11/ԵՀ L 73 հրահանգ		5	14.03.1997թ.
<a href="#">▼M2</a>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի մայիսի 26-ի 2003/35/ԵՀ հրահանգ L 156		17	25.06.2003թ.
<a href="#">▼M3</a>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգ (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)	L 140	114	5.6.2009

---

ԽՈՐՀՐԴԻ 1985 թվականի հունիսի 27-ի ՀՐԱՀԱՆԳ

Կոնկրետ պետական և մասնավոր նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման մասին

(85/337/ԵՏՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը  
և, մասնավորապես, դրա 100-րդ և 235-րդ հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ Եվրոպական համայնքների՝ 1973 (4) և 1977 (5) թվականների բնապահպանական  
գործողությունների նախագծերը, ինչպես նաև 1983 (6) թվականի այն գործողությունների  
նախագիծը, որոնց հիմնական սկզբունքները հաստատվել են Եվրոպական համայնքների  
խորհրդի և անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների կողմից,  
ընդգծում են այն փաստը, որ բնապահպանական լավագույն քաղաքականությունը  
աղտոտման կամ վնասակար նյութերի կամ աղտոտող նյութերի գոյացման աղբյուրի  
առաջացման կանխարգելման, այլ ոչ թե հետագայում դրանց ազդեցությունները վերացնելուն  
ուղղված փորձեր գործադրելու մեջ է. քանի որ նրանք վերահաստատում են տեխնիկական  
պլանավորման և որոշումների ընդունման բոլոր գործընթացներում հնարավորինս վաղ  
փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը.  
քանի որ այդ իսկ նպատակով դրանք նախատեսում են այդ ազդեցությունները գնահատելու  
ընթացակարգերի իրականացում,

քանի որ պետական և մասնավոր նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հետ կապված տարբեր անդամ պետություններում գործող օրենքների միջև  
անհամապատասխանությունները կարող են ստեղծել անբարենպաստ մրցակցային  
պայմաններ և դրանով իսկ ուղղակիորեն ազդել ընդհանուր շուկայի աշխատանքի վրա. քանի

որ, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է տվյալ ոլորտում ազգային օրենքները համապատասխանեցնել՝ Պայմանագրի 100-րդ հոդվածին համապատասխան,

քանի որ, ի հավելումն դրան, անհրաժեշտ է հասնել շրջակա միջավայրի պաշտպանության և կյանքի որակի հարցում Համայնքի նպատակներից որևէ մեկին,

քանի որ այս նպատակով պահանջվող լիազորություններ Պայմանագրով չեն նախատեսվում, պետք է կիրառվի Պայմանագրի 235-րդ հոդվածը,

քանի որ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման համար ընդհանուր սկզբունքներ պետք է ներմուծվեն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր խոշոր ազդեցություն ունեցող պետական և մասնավոր նախագծերը կարգավորող՝ նախագծման աշխատանքներն իրականացնելու համար թույլտվության ընթացակարգերը լրացնելու և համակարգելու նպատակով,

քանի որ շրջակա միջավայրի վրա հնարավոր զգալի ազդեցություն ունեցող՝ պետական և մասնավոր նախագծերի համար նախագծման աշխատանքներն իրականացնելու համար թույլտվությունը տրվում է բացառապես մինչ այդ նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր զգալի ազդեցությունների նախնական գնահատման իրականացումը, քանի որ այս գնահատումը պետք է իրականացվի նախագիծ մշակողի կողմից տրամադրված համապատասխան տեղեկատվության հիման վրա, որը կարող է լրացվել այն պետական մարմինների և անձանց կողմից, որոնց կարող է հետաքրքրել համապատասխան նախագիծը,

քանի որ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման սկզբունքները պետք է ներդաշնակեցվեն, մասնավորապես այն նախագծերի մասով, որոնք պետք է ենթարկվեն գնահատման, ինչպես նաև նախագիծ մշակողների հիմնական պարտավորությունների և գնահատման բովանդակության մասով,

քանի որ որոշ տեսակի նախագծեր շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություններ ունեն և այդ նախագծերը պետք է, որպես կանոն, ենթարկվեն պարբերական գնահատման,

քանի որ այլ տեսակի նախագծեր ոչ մի դեպքում չեն կարող զգալի ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա և քանի որ այդ նախագծերը պետք է գնահատվեն, եթե անդամ պետությունները համարում են, որ դա պահանջվում է՝ ելնելով դրանց առանձնահատկություններից,

քանի որ գնահատման ենթակա նախագծերի համար պետք է նախագծի և դրա ազդեցությունների վերաբերյալ տրամադրվի որոշակի նվազագույն տեղեկատվություն,

քանի որ շրջակա միջավայրի վրա նախագծի ազդեցությունները պետք է գնահատվեն՝ մարդու առողջությունը պաշտպանելու համար մտահոգող հարցերը հաշվի առնելու, նպաստելու կյանքի որակին՝ բարելավված միջավայրի միջոցով, տեսակների բազմազանության պահպանումն ապահովելու և կյանքի հիմնական աղբյուր հանդիսացող էկոհամակարգի վերարտադրողական կարողությունը պահպանելու համար,

քանի որ, այնուհանդերձ, սույն Հրահանգը չպետք է կիրառվի այն նախագծերի նկատմամբ, որոնց մանրամասներն ընդունվում են ազգային օրենսդրության կոնկրետ ակտով, քանի որ սույն Հրահանգի նպատակները՝ ներառյալ տեղեկատվությունը տրամադրելը, իրականացվում են օրենսդրական գործընթացի միջոցով,

քանի որ, ավելին, առավել նպատակահարմար է բացառիկ դեպքերում բացառել սույն Հրահանգով սահմանված գնահատման ընթացակարգերից կոնկրետ նախագիծը, որի վերաբերյալ պետք է համապատասխան տեղեկատվություն տրամադրվի Հանձնաժողովին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

1. Սույն Հրահանգը կիրառվում է այն մասնավոր և պետական նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման նկատմամբ, որոնք կարող են զգալի ազդեցություններ ունենալ շրջակա միջավայրի վրա:

2. Սույն Հրահանգի նպատակներով՝

«նախագիծ» նշանակում է՝

– շինարարական կամ այլ մոնտաժային և այլ աշխատանքների իրականացում,

– բնական միջավայր և լանդշաֆտ, այդ թվում՝ հանքային ռեսուրսների արդյունահանում ներառող այլ միջամտություններ.

«նախագիծ մշակող» նշանակում է՝

մասնավոր նախագծի համար թույլտվություն ստանալու համար դիմող անձ կամ նախագծի իրականացման աշխատանքները նախաձեռնող պետական մարմին.

«նախագծի աշխատանքների իրականացման թույլտվություն» նշանակում է՝

իրավասու մարմնի կամ մարմինների որոշում, որի համաձայն, նախագիծ մշակողին թույլ է տրվում իրականացնել նախագիծը.

#### ▼M2

«հասարակություն» նշանակում է՝

մեկ կամ ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք և, ազգային օրենսդրության կամ պրակտիկայի համաձայն, այդ անձանց ասոցիացիաները, կազմակերպությունները կամ խմբերը.

«շահագրգիռ հասարակություն» նշանակում է՝

հասարակությունը, որի վրա ազդեցություն ունի կամ կարող է ունենալ 2(2) հոդվածում նշված՝ շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման ընթացակարգը, կամ ովքեր հետաքրքրված են դրանով. սույն սահմանման նպատակներով՝ շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող և ազգային օրենսդրության պահանջները բավարարող հասարակական կազմակերպությունները համարվում են շահագրգիռ:

#### ▼B

3. Իրավասու մարմինը կամ մարմինները այն մարմինն են, որոնց վրա անդամ պետությունները պատասխանատվություն են դնում՝ սույն Հրահանգից բխող պարտավորությունները կատարելու համար:

#### ▼M2

4. Անդամ պետությունները կարող են որոշել ազգային օրենսդրությամբ սահմանված առանձին դեպքերում չկիրառել սույն Հրահանգը ազգային անվտանգության նպատակներին ծառայող նախագծերի նկատմամբ, եթե գտնում են, որ Հրահանգի կիրառումը կարող է բացասաբար ազդել այս նպատակների վրա:

#### ▼B

5. Սույն Հրահանգը չի կիրառվում այն նախագծերի նկատմամբ, որոնց մանրամասներն ընդունվում են ազգային օրենսդրության կոնկրետ ակտով, քանի որ սույն Հրահանգի նպատակները, այդ թվում նաև տեղեկատվության տրամադրման նպատակը, իրականացվում է օրենսդրական գործընթացի միջոցով:

## *Հոդված 2*

### ▼M1

1. Անդամ պետություններն ընդունում են բոլոր անհրաժեշտ միջոցները, ապահովելու, որ մինչ նախագծի իրականացման համար թույլտվություն տալը, շրջակա միջավայրի վրա հնարավոր զգալի ազդեցություններ ունեցող նախագծերի նկատմամբ, մասնավորապես, ելնելով իրենց բնույթից, մասշտաբից կամ տեղակայումից, ներկայացվի նախագծի աշխատանքների իրականացման թույլտվության և այդ նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման պահանջ: Այդ նախագծերը սահմանվում են 4-րդ հոդվածով:

### ▼B

2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կարող է կազմել անդամ պետություններում նախագծերի իրականացման թույլտվության համար գործող ընթացակարգերի մի մասը կամ այլապես, այլ ընթացակարգերի կամ սույն Հրահանգի նպատակներին համապատասխանելու համար սահմանվելիք ընթացակարգերի մի մասը:

### ▼M1

2ա. Անդամ պետությունները կարող են նախատեսել միասնական ընթացակարգ՝ սույն Հրահանգի պահանջները և ադտոտման ընդհանուր կանխարգելման ու հսկողության մասին Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ հրահանգի պահանջները կատարելու նպատակով:

### ▼M1

3. Չհակասելով 7-րդ հոդվածին՝ անդամ պետությունները կարող են բացառիկ դեպքերում բացառել կոնկրետ նախագիծն ամբողջությամբ կամ մասամբ՝ սույն Հրահանգով սահմանված դրույթների կատարումից:

### ▼B

Այդ դեպքում անդամ պետությունները պետք է՝

### ▼M2

ա) դիտարկեն, թե արդյոք նպատակահարմար է գնահատման մեկ այլ ձևի կիրառումը.

բ) շահագրգիռ հասարակությանը տրամադրեն (ա) կետում նշված գնահատման այլ ձևերով ձեռք բերված տեղեկատվությունը, հրահանգի դրույթները չկիրառելու մասին որոշումների և նման որոշում ընդունելու պատճառների վերաբերյալ տեղեկատվությունը.

#### ▼B

գ) տեղեկացնեն Հանձնաժողովին՝ մինչև համաձայնություն տալը, շնորհված բացառումը հիմնավորելու պատճառների մասին և, ►M1 անհրաժեշտության դեպքում ◀, իրենց քաղաքացիներին տրամադրեն մատչելի տեղեկություններ:

Հանձնաժողովը ստացված փաստաթղթերն անմիջապես ուղարկում է անդամ պետություններ:

Հանձնաժողովը սույն պարբերության կիրառման վերաբերյալ տարեկան հաշվետվություն է ներկայացնում Խորհուրդ:

#### ▼M1

### *Հոդված 3*

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման արդյունքում սահմանվում, նկարագրվում և գնահատվում է համապատասխան ձևով՝ յուրաքանչյուր առանձին դեպքի համար և, 4-11-րդ հոդվածների համաձայն, հետևյալ գործոնների վրա նախագծի ուղղակի և անուղղակի ազդեցությունները՝

- մարդիկ, բուսական և կենդանական աշխարհ,
- հող, ջուր, օդ, կլիմա և լանդշաֆտ,
- նյութական ակտիվներ և մշակութային ժառանգություն,
- առաջին, երկրորդ և երրորդ պարբերությունում նշված գործոնների փոխգործունեություն:

### *Հոդված 4*

1. 2(3) հոդվածի համաձայն՝ I հավելվածում թվարկված նախագծերը պետք է ենթարկվեն գնահատման՝ 5-10-րդ հոդվածների համաձայն:

2. 2(3) հոդվածի՝ II հավելվածում թվարկված նախագծերի համար անդամ պետությունները սահմանում են հետևյալի միջոցով՝

ա) ուսումնասիրություն՝ ըստ կոնկրետ դեպքի,

կամ

բ) անդամ պետության կողմից սահմանված շեմեր կամ չափանիշներ:

2. Թե արդյոք նախագիծը պետք է ենթարկվի գնահատման՝ 5-10-րդ հոդվածների համաձայն:

Անդամ պետությունները կարող են որոշել՝ արդյոք կիրառել (ա) և (բ) կետերում նշված երկու ընթացակարգը:

3. Եթե ըստ կոնկրետ դեպքերի ուսումնասիրություն է իրականացվում կամ 2-րդ պարբերության նպատակներով շեմեր կամ չափանիշներ են սահմանվում, անհրաժեշտ է հաշվի առնել III հավելվածում սահմանված համապատասխան ընտրության չափորոշիչները:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ 2-րդ պարբերության համաձայն, իրավասու մարմինների կողմից կատարված սահմանումը մատչելի լինի հասարակությանը:

#### *Հոդված 5*

1. Այն նախագծերի դեպքում, որոնք, 4-րդ հոդվածի համաձայն, պետք է ենթարկվեն 5-10-րդ հոդվածների համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդամ պետություններն ընդունում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ նախագիծ մշակողը պատշաճորեն մատակարարի IV հավելվածում նշված տեղեկություններն այնքանով, որքանով՝

ա) անդամ պետությունները համարում են, որ տեղեկությունը կարևոր է՝ թույլտվության շնորհման ընթացակարգի տվյալ փուլի և կոնկրետ նախագծի կամ նախագծի տեսակի ու շրջակա միջավայրի հատկանիշների կոնկրետ առանձնահատկությունների համար, որոնք հնարավոր ազդեցություն են կրելու,

բ) անդամ պետությունները համարում են, որ նախագիծ մշակողից կարելի է հիմնավորված կերպով պահանջել հավաքել այս տեղեկությունները, մասնավորապես, առկա գիտելիքների և գնահատման մեթոդների մասով:

2. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ նախագիծ մշակողն այն պահանջի մինչև զարգացման համաձայնության համար դիմում ներկայացնելը, իրավասու մարմինը, 1-ին պարբերության համաձայն, նախագիծ մշակողի կողմից մատակարարվող տեղեկությունների մասին կարծիք ներկայացնի: Իրավասու



մարմինը պետք է խորհրդակցի 6-րդ պարբերության 1-ին կետում նշված նախագիծ մշակողի և իրավասու մարմինների հետ: Այն փաստը, որ իրավասու մարմինը, սույն պարբերության համաձայն, կարծիք է ներկայացրել, չի նշանակում, որ վերջինս ազատվում է նախագիծ մշակողից լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու պարտականությունից:

Անդամ պետությունները կարող են այդ եզրակացությունը ներկայացնել իրավասու մարմիններ՝ անկախ նրանից, թե այն պահանջում է նախագիծ մշակողը, թե ոչ:

3. Առաջին պարբերության համաձայն՝ նախագիծ մշակողի կողմից տրամադրվելիք տեղեկությունները պետք է առնվազն ներառեն՝

- նախագծի տեղանքում նախագծման և մասշտաբի մասին տեղեկություններ հավաքող նախագծի նկարագրություն,
- զգալի բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու և, հնարավորության դեպքում, վերացնելու համար նախատեսվող միջոցների նկարագրություն,
- շրջակա միջավայրի վրա նախագծի վրա հնարավոր հիմնական ազդեցությունները սահմանելու և գնահատելու համար պահանջվող տեղեկությունները,
- նախագիծ մշակողի կողմից ուսումնասիրվող հիմնական այլընտրանքային եղանակների ուրվագիծ և այս ընտրության հիմնական պատճառների նշում՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունները,
- նախորդ պարբերություններում նշված տեղեկությունների ոչ տեխնիկական ամփոփ նկարագիր:

4. Անդամ պետությունները, անհրաժեշտության դեպքում, ապահովում են, որ բոլոր այն իրավասու մարմինները, որոնք տնօրինում են համապատասխան տեղեկատվությունը՝ հատուկ հղում կատարելով 3-րդ հոդվածին, նախագիծ մշակողին մատչելի դարձնեն այս տեղեկությունները:

## **▼B**

### *Հոդված 6*

## **▼M1**

1. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու, որ իրավասու մարմինները շրջակա միջավայրի նկատմամբ իրենց կոնկրետ պատասխանատվություններից ելնելով, նախագծով հավանաբար շահագրգռված իրավասու մարմիններին հնարավորություն ընձեռվի իրենց եզրակացությունը ներկայացնել նախագիծը

մշակողի կողմից տրամադրվող տեղեկատվության և նախագծի աշխատանքների իրականացման թույլտվություն ստանալու համար դիմումի մասին: Այս նպատակով անդամ պետությունները խորհրդատվության համար նշանակում են մարմիններ՝ ընդհանուր պայմաններով կամ կոնկրետ դեպքերից ելնելով: Հինգերորդ պարբերության համաձայն հավաքված տեղեկություններն ուղարկվում են այդ մարմիններ: Խորհրդատվության համար մանրամասն միջոցառումները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

## ▼M2

2. Հասարակությունը հրապարակային ծանուցումներով կամ համապատասխան այլ միջոցներով, ինչպիսիք են, առկայության դեպքում, էլեկտրոնային լրատվամիջոցները, 2(2) հոդվածում նշված՝ շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման ընթացակարգի վաղ փուլում, իսկ ամենաուշը՝ տեղեկատվությունը համապատասխան կերպով փոխանցելու հնարավորության դեպքում, տեղեկացվում է հետևյալի մասին՝

ա) կառուցապատման համաձայնության վերաբերյալ հարցման մասին.

բ) նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատման ընթացակարգի ենթակա լինելու և, անհրաժեշտության դեպքում, 7-րդ հոդվածի կիրառման մասին.

գ) մանրամասներ որոշումն ընդունելու համար պատասխանատու իրավասու մարմինների մասին, այն մարմինների մասին, որոնցից կարելի է ձեռք բերել համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև այն մարմինների մասին, որոնց կարելի է ներկայացնել դիտողություններ կամ հարցեր, և դիտողություններն ու հարցերը փոխանցելու ժամկետների մանրամասներ.

դ) հնարավոր որոշումների բնույթի կամ, առկա որոշման դեպքում, որոշման նախագծի մասին.

ե) հիշատակում 5-րդ հոդվածի համաձայն ձեռք բերված տեղեկատվության մատչելիության մասին.

զ) հիշատակում ժամկետների կամ այն վայրերի մասին, որտեղ և որոնց միջոցով համապատասխան տեղեկատվությունը կտրամադրվի.

է) հասարակության մասնակցության՝ 5-րդ կետի համաձայն արված կարգավորումների մանրամասներ:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ հետևյալը ողջամիտ ժամկետներում տրամադրվի հասարակությանը՝

ա) 5-րդ հոդվածի համաձայն ձեռք բերված ցանկացած տեղեկատվություն.

բ) համաձայն ազգային օրենսդրության՝ հիմնական զեկույցները և խորհուրդները, որոնք ներկայացվել են իրավասու մարմինն կամ մարմիններին այն ժամանակահատվածում, երբ հասարակությունը տեղեկացվում է սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն.

գ) «Շրջակա միջավայրի մասին տեղեկությունների հանրային մատչելիության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի 2003/4/ԵՀ հրահանգի դրույթների համաձայն ([8](#))՝ սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված տեղեկություններից բացի այլ տեղեկություններ, որոնք կարևոր են 8-րդ հոդվածի համաձայն՝ որոշման համար և որոնք դառնում են մատչելի միայն այն ժամանակահատվածից հետո, երբ շահագրգիռ հասարակությունը տեղեկացվում է՝ սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն:

4. Շահագրգիռ հասարակությանը տրվում են 2(2) հոդվածում նշված շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացին վաղ փուլում մասնակցելու արդյունավետ հնարավորություններ, դիտողություններ և կարծիք հայտնելու իրավունք, երբ իրավասու մարմինը կամ մարմինների համար բաց են բոլոր տարբերակները կառուցապատման համաձայնության վերաբերյալ հարցմանն առնչվող որոշումն ընդունելուց առաջ:

5. Հասարակությանը տեղեկացնելու (օրինակ, որոշակի շառավղով պաստառներ փակցնելու կամ տեղական թերթերում հրապարակումների միջոցով) և հանրության հետ խորհրդակցելու մանրամասն կարգավորումները ( օրինակ, գրավոր դիմումների կամ հանրային հարցումների միջոցով) սահմանվում են անդամ պետությունների կողմից:

6. Սահմանվում են ողջամիտ ժամկետներ՝ տրամադրելով բավարար ժամանակ հասարակության տեղեկացման և շահագրգիռ հասարակության կողմից սույն հոդվածի դրույթների համաձայն շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին նախապատրաստման և արդյունավետ մասնակցության համար:

[▼M1](#)

## Հոդված 7

### ▼M2

1. Եթե անդամ պետությանը հայտնի է, որ նախագիծը կարող է էական ազդեցություն ունենալ մեկ այլ անդամ պետության շրջակա միջավայրի վրա, կամ եթե որևէ անդամ պետություն, որը կարող է էական ազդեցություններ կրել, նման պահանջ է ներկայացնում, այն անդամ պետությունը, որի տարածքում պետք է իրականացվի նախագիծը, ազդեցություն կրող անդամ պետությանը հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան հանրությանը տեղեկացնելուց հետո, ուղարկում է, մասնավորապես՝

ա) նախագծի նկարագրությունը՝ ընդգրկելով առկա տեղեկատվություն հնարավոր անդրսահմանային ազդեցության մասին.

բ) այն որոշման բնույթի մասին, որը կարող է ընդունվել.

և այլ անդամ պետությունների համար սահմանում է ողջամիտ ժամկետ՝ տեղեկացնելու համար, որ իրենք ուզում են մասնակցել 2(2) հոդվածում նշված շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունման ընթացակարգին և կարող է ներկայացնել սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված տեղեկատվությունը:

2. Եթե որևէ անդամ պետություն, որը ստանում է 1-ին պարբերությամբ սահմանված տեղեկատվություն, հայտնում է, որ մտադիր է մասնակցել շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունման ընթացակարգին, այն անդամ պետությունը, որի տարածքում նախագիծը պետք է իրականացվի, ազդեցություն կրող անդամ պետությանն է ուղարկում, եթե նախապես դա չի արել, տեղեկատվություն, որը պահանջվում է տրամադրվել 6(2) հոդվածի և մատչելի դարձնել 6(3)(ա) և (բ) հոդվածների համաձայն:

### ▼M1

3. Շահագրգիռ անդամ պետությունները, այնքանով, որքանով յուրաքանչյուրը շահագրգռված է, պետք է նաև՝

ա) ապահովեն 1-ին և 2-րդ պարբերության մեջ նշված տեղեկատվության մատչելիությունը խելամիտ ժամկետում՝ 6(1) հոդվածում նշված մարմինների և շահագրգիռ հասարակության համար այն անդամ պետության տարածքում որը կարող է զգալի ազդեցություն կրել, և

բ) ապահովեն, որ այդ մարմիններին և շահագրգիռ հասարակությանը հնարավորություն ընձեռվի՝ մինչև նախագծի համար զարգացման շուրջ համաձայնություն շնորհելը, խելամիտ ժամկետներում իրենց եզրակացությունն ուղարկել այն անդամ պետությունում իրավասու

մարմնին տրամադրվող տեղեկատվության մասին, որի տարածքում այդ նախագիծը կարող է իրականացվել:

4. Շահագրգիռ անդամ պետությունները մասնակցում են խորհրդակցություններին, մասնավորապես, նախագծի հնարավոր միջսահմանային արդյունքների և միջոցառումների շուրջ, որոնք նախատեսված են նվազեցնելու կամ վերացնելու այդ արդյունքները և խորհրդակցման ժամանակահատվածի տևողության համար խելամիտ ժամկետ են սահմանում:

#### ▼M2

5. Սույն հոդվածի կիրառման մանրամասն կարգավորումները կարող են սահմանվել համապատասխան անդամ պետությունների կողմից և պետք է լինեն այնպիսին, որ ազդեցություն կրող անդամ պետության շահագրգիռ հասարակությանը հնարավորություն տրվի մասնակցելու 2(2) հոդվածում նշված շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունման ընթացակարգին:

#### ▼M1

### *Հոդված 8*

5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածների համաձայն՝ խորհրդակցությունների արդյունքները և հավաքագրված տեղեկատվությունը պետք է հաշվի առնվեն զարգացման շուրջ համաձայնության ընթացակարգի ժամանակ:

### *Հոդված 9*

#### ▼M2

1. Երբ ընդունվում է կառուցապատման համաձայնություն տալու կամ մերժելու որոշում, իրավասու մարմինը կամ մարմինները, համապատասխան ընթացակարգերի համաձայն, այդ մասին տեղեկացնում են հասարակությանը և տվյալ հասարակությանը տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը՝

– որոշման բովանդակությունը և դրան կից բոլոր պայմանները.

– ուսումնասիրելով շահագրգիռ հասարակության դիտողություններն ու կարծիքները՝ որոշման ընդունման հիմքում ընկած հիմնական պատճառներն ու նկատառումները՝ ներառյալ տեղեկատվություն հասարակության մասնակցության գործընթացի վերաբերյալ.

– բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու և, հնարավորության դեպքում, չեզոքացնելու միջոցառումների նկարագրություն:

2. Իրավասու մարմինը կամ մարմինները տեղեկացնում են ցանկացած անդամ պետության, որի հետ խորհրդակցություն է անցկացվել 7-րդ հոդվածի համաձայն, տվյալ անդամ պետությանը ուղարկելով սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված տեղեկատվությունը:

Այն անդամ պետությունը, որի հետ խորհրդակցություն է անցկացվել, ապահովում է, որ տեղեկատվությունը համապատասխան կերպով հասանելի դարձվի շահագրգիռ հասարակությունը:

#### ▼M1

##### *Հոդված 10*

Սույն Հրահանգի դրույթները չպետք է ներգործեն ազգային կանոնակարգերի և վարչական դրույթներով սահմանված սահմանափակումները կատարելու իրավասու մարմինների պարտավորության վրա ու առևտրային և արդյունաբերական գաղտնիության մասով ընդունեն իրավական պրակտիկան՝ ներառյալ մտավոր սեփականությունն ու հանրային շահ ներկայացնող պաշտպանությունը:

Եթե 7-րդ հոդվածը կիրառվում է, ապա մեկ այլ անդամ պետության տեղեկություններ փոխանցելը և մեկ այլ անդամ պետության կողմից տեղեկություններ ստանալը ենթարկվում է այն անդամ պետությունում գործող սահմանափակումներին, որտեղ առաջարկվում է նախագիծը:

#### ▼M2

##### *Հոդված 10ա*

Անդամ պետություններն ապահովում են, որ, համապատասխան ազգային օրենսդրության համաձայն, շահագրգիռ հասարակության անդամները՝

ա) որոնք բավականաչափ շահագրգռված են, կամ

բ) որոնց իրավունքը շարունակում է խախտված մնալ, եթե դա պահանջվում է անդամ պետության վարչական դատավարության իրավունքով որպես նախապայման.

կարող են օգտվել վերանայման ընթացակարգից դատարանում կամ օրենքի համաձայն ստեղծված մեկ այլ անկախ և անկողմնակալ մարմնում՝ որոշումների, գործողությունների

կամ նյութական կամ ընթացակարգային օրինականությունը վիճարկելու նպատակով՝ պահպանելով հասարակության մասնակցության մասին սույն Հրահանգի դրույթները:

Անդամ պետությունները սահմանում են, թե որ փուլում կարող են վիճարկվել որոշումները, գործողություններն ու անգործությունը:

Թե ինչ են իրենցից ներկայացնում բավարար շահագրգռվածությունը և իրավունքի չեղյալ հայտարարումը, սահմանվում է անդամ պետությունների կողմից՝ համաձայն հասարակության համար արդարադատության մատչելիությունն ապահովելու նպատակի: Այս նպատակով, 1(2) հոդվածի պահանջները բավարարող հասարակական կազմակերպության շահագրգռվածությունը համարվում է բավարար սույն հոդվածի (ա) պարբերության նպատակների համար: Նման կազմակերպություններն համարվում են այնպիսի իրավունքներ ունեցողներ, որոնք կարող են խախտվել սույն հոդվածի (բ) ենթապարբերության իմաստով:

Սույն հոդվածի դրույթները չեն բացառում նախնական վերանայման ընթացակարգի հնարավորությունը վարչական որևէ մարմնում և չեն ազդում դատական վերանայման ընթացակարգից առաջ վարչական վերանայման ընթացակարգի դադարման պահանջի վրա, եթե նման պահանջ կա ազգային օրենսդրության համաձայն

Ցանկացած նման ընթացակարգ պետք է լինի արդար, անաչառ, առանց ձգձգումների և չընդգրկի չափազանց մեծ ծախսեր:

Սույն հոդվածի դրույթների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ անդամ պետությունն ապահովում է, որ գործնական տեղեկատվություն հասարակությանը տրամադրվի գործնական տեղեկատվություն՝ հնարավոր դարձնելով վարչական և դատական վերանայման ընթացակարգերը:

## **▼B**

### *Հոդված 11*

1. Անդամ պետությունները և Հանձնաժողովը սույն Հրահանգի կիրառման ընթացքում ձեռք բերված փորձի վերաբերյալ տեղեկություններ են փոխանակում:

## **▼M1**

2. Անդամ պետությունները, մասնավորապես, տեղեկացնում են Հանձնաժողովին 4(2) հոդվածի համաձայն համապատասխան նախագծերի ընտրության համար ընդունված բոլոր չափանիշների և (կամ) շեմերի մասին:

**▼B**

3. Սույն Հրահանգի ծանուցումից հինգ տարի անց Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ հաշվետվություն է ուղարկում դրա արդյունավետության և կիրառման մասին: Հաշվետվությունը հիմնված է վերը նշված տեղեկությունների փոխանակման վրա:

4. Տեղեկությունների այս փոխանակման հիման վրա Հանձնաժողովը Խորհուրդ է ներկայացնում լրացուցիչ առաջարկություններ, անհրաժեշտության դեպքում՝՝ սույն Հրահանգը բավականաչափ համակարգված ձևով կիրառելու համար:

*Հոդված 12*

1. Անդամ պետությունները ծանուցումից երեք տարի անց ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ սույն Հրահանգին համապատասխանելու համար:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում սույն Հրահանգով նախատեսվող ոլորտում ընդունվելիք ազգային իրավունքի դրույթների տեքստերը:

**▼M1** \_\_\_\_\_

**▼B**

*Հոդված 14*

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

**▼M1**

\_\_\_\_\_



4(1) ՀՈՂՎԱԾՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՆԱԽԱԳԾԵՐԸ

1. Նավթամշակման գործարաններ (բացառությամբ այն ձեռնարկությունների, որոնք չմշակված նավթից ստանում են միայն քսայուղեր) և օրական 500 տոննայից ոչ պակաս կամ ավելին ածխի կամ նավթաբեր թերթաքարի գազաֆիկացման և հեղուկացման գործարաններ:

2. - 300 կամ ավելին մեգավատ հզորությամբ ջերմաէլեկտրակայաններ և այրման այլ կայանքներ և

- ատոմակայաններ և այլ միջուկային ռեակտորներ, այդ թվում նաև՝ այդ կայանների կամ ռեակտորների ապամոնտաժում կամ շահագործման դադարեցում ([10](#)) (բացառությամբ տրոհվող և վերարտադրվող նյութերի արտադրության և փոխարկման ոլորտում գիտահետազոտական ինստիտուտների, որոնց առավելագույն հզորությունը չի գերազանցում 1 կիլովատ շարունակական ջերմային բեռնվածքը):

3. ա) Ռադիոակտիվ միջուկային վառելիքի վերամշակման օբյեկտներ,  
բ) օբյեկտներ, որոնք նախատեսված են՝

- միջուկային վառելիքի արտադրման կամ հարստացման համար,

- ռադիոակտիվ միջուկային վառելիքի կամ բարձր ռադիոակտիվության թափոնների արտադրման համար,

- ռադիոակտիվ միջուկային վառելիքի վերջնական հեռացման համար,

- միայն ռադիոակտիվ թափոնների վերջնական հեռացման համար,

- միայն արտադրամասից բացի այլ կայանքում ռադիոակտիվ միջուկային վառելիքների կամ ռադիոակտիվ թափոնների պահեստավորման համար (ավելի քան տասը տարվա համար պլանավորված),

4. - Թուջի և պողպատի նախնական ձուլման գործարան,  
  
- մետաղագործական, քիմիական կամ էլեկտրոլիտիկ գործընթացներով հանքաքարից, մետաղի կոնցենտրատներից կամ երկրորդային հումքից գունավոր, չգտած մետաղների արտադրության համար գործարաններ,
  
5. Ասբեստի արդյունահանման ինչպես նաև ասբեստի արտադրանքի ու ասբեստի մշակման և փոխակերպման գործարաններ, ասբեստի, ցեմենտի արտադրանքի համար՝ 20 000 տոննայից ավելի վերջնական արտադրանքի տարեկան արտադրությամբ, տրոհման նյութերի համար՝ 50 տոննայից ավելի վերջնական արտադրանքի տարեկան արտադրությամբ և ասբեստի՝ այլ նպատակներով օգտագործման դեպքում՝ տարեկան 200 տոննայից ավելի օգտագործմամբ:
  
6. Քիմիական կոմբինատներ, այսինքն՝ քիմիական կոնվերսիայի գործընթացների կիրառմամբ նյութերի արդյունաբերական մասշտաբների արտադրության համար այն գործարանները, որտեղ համադրվում են մի շարք արտադրամասեր ու միմյանց հետ ֆունկցիոնալ կապ ունեն և որոնք՝
  - i) հիմնական օրգանական քիմիական նյութերի արտադրության համար են,
  - ii) հիմնական անօրգանական քիմիական նյութերի արտադրության համար են,
  - iii) ֆոսֆորային, ազոտային կամ կալիումական պարարտանյութերի արտադրության համար են(մաքուր կամ խառնուրդով պարարտանյութեր),
  - iv) հիմնական բույսերի առողջության արտադրանքների և բիոցիդների արտադրության համար են,
  - v) քիմիական կամ կենսաբանական գործընթացների կիրառմամբ հիմնական դեղագործական արտադրանքի արտադրության համար են,
  - vi) պայթուցիկ նյութերի արտադրության համար են:

7. ա) 2 100 կամ ավելի ընդհանուր երկարությամբ երկաթուղային մայրուղիների և օդանավակայանների շինարարություն ([11](#)),  
  
բ) ավտոմայրուղիների և ճեպընթացների համար նախատեսվող ճանապարհների շինարարություն ([12](#)),  
  
գ) չորս կամ ավելի գոտիներով նոր ճանապարհի շինարարություն, կամ երկու կամ պակաս գոտիներով շահագործվող ճանապարհի վերադասավորում և (կամ) ընդլայնում՝ չորս կամ ավելի գոտիներ ավելացնելու նպատակով, որտեղ այդ նոր ճանապարհը կամ ճանապարհի վերադասավորված և(կամ) ընդլայնված գոտու չընդհատվող երկարությունը կկազմի 10 կմ կամ ավելին:  
  
8. ա) Ներքին ջրուղիներ և ներքին ջրուղիների համար նավահանգիստներ, որոնք հնարավորություն են տալիս 1 350 տոննա բեռնատարողությամբ նավերի անցման համար,  
  
բ) սեփական նավահանգիստների և ավանպորտերի հետ կապված առևտրային նավահանգիստներ, բեռնման և բեռնաթափման կառանման պիրսեր (բացառությամբ լաստանավի կառանման տեղեր), որոնք ունեն 1 350 տոննա բեռնատարողությամբ նավի թողունակություն:  
  
9. Դ9 վերնագրի համաձայն՝ 75/442/ԵՏՀ հրահանգի IIԱ հավելվածով սահմանված այրելու, քիմիական վերամշակման համար թափոնների հեռացման գործարաններ կամ վտանգավոր քիմիական նյութերի գերեզմանոց (այսինքն՝ թափոն, որի նկատմամբ կիրառվում է 91/689/ԵՏՀ ([14](#)) հրահանգը):  
  
10. Դ9 վերնագրի համաձայն՝ 75/442/ԵՏՀ հրահանգի IIԱ հավելվածով սահմանված այրման կամ քիմիական վերամշակման համար՝ օրական 100 տոննան գերազանցող հզորությամբ ոչ վտանգավոր թափոնների հեռացման գործարաններ:

11. Գրունտային ջրերի դուրս բերման/թափման կամ ստորգետնյա ջրերի պաշարների արհեստական լրացման պլաններ, որտեղ դուրս բերված կամ լրացված ջրերի տարեկան ծավալը կազմում կամ գերազանցում է 10 մլն խորանարդ մետրը:

12. ա) Գետերի ավազանների ջրային ռեսուրսների փոխանցման համար գործարաններ, որտեղ այդ փոխանցումն ուղղված է հնարավոր սակավաջրության կանխարգելմանը և որտեղ փոխանցվող ջրերի քանակը տարեկան կտրվածքով գերազանցում է 100 մլն խորանարդ մետրը,

բ) մնացած բոլոր դեպքերում գետերի ավազանների միջև ջրային ռեսուրսների փոխանցման համար գործարաններ, որտեղ ջրերի դուրս բերման ավազանի մի քանի տարեկան միջին հոսքը գերազանցում է 2 000 մլն խորանարդ մետրը և որտեղ փոխանցվող ջրի քանակը գերազանցում է այդ հոսքի 5 %-ը:

Երկու դեպքում էլ բացառվում են ջրատարներով խմելու ջրի փոխանցումները:

13. 91/271/ԵՏՀ ([15](#)) հրահանգի 2-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված՝ 150 000 բնակիչներից ավելի սպասարկող՝ կեղտաջրերի մշակման կայաններ:

14. Առևտրային նպատակներով բենզինի և բնական գազի արդյունահանում, որտեղ արդյունահանված քանակը գերազանցում է օրական 500 տոննան՝ բենզինի դեպքում և օրական 500 000 խորանարդ մետր՝ գազի դեպքում:

15. Պատվարներ և այլ կայանքներ, որոնք նախատեսված են ջրապահման կամ մշտական ջրամբարների համար, որտեղ պահված կամ պահպանված ջրի նոր կամ լրացուցիչ քանակը գերազանցում է 100 մլն խորանարդ մետրը:

### **▼M3**

16. 800 մմ-ը գերազանցող տրամագծով և 40 կմ-ից ավելի երկարությամբ ջրատարներ՝

- գազի, նավթի, քիմիական նյութերի փոխադրման համար և

- ածխաթթու գազի (CO2) փոխադրման համար, ստորգետնյա պահպանման նպատակներով ջրահոսքեր, այդ թվում նաև՝ պոմպային և ճնշակային կայաններ:

**▼M1**

17.

Թոշունների կամ խոզերի՝ ժամանակակից ինտենսիվ տեխնոլոգիաներով բուծման համար ֆաբրիկաներ ավելի քան՝

ա) 85 000 տեղ՝ բրոյլերների համար, 60 000 տեղ՝ հավերի համար,

բ) 3 000 տեղ՝ արտադրության համար նախատեսվող խոզերի (30 կգ-ից ավելի) համար կամ

գ) 900 տեղ՝ սերմերի համար:

18. Արդյունաբերական գործարաններ

ա) փայտանյութից կամ նմանատիպ թելքային նյութերից խեժ/թելքավոր մասսա արտադրելու համար,

բ) օրական 200 տոննան գերազանցող արտադրական կարողությամբ թղթի և տախտակի արտադրություն,

19. Քարհանք և բաց արդյունահանում, որտեղ կայանքի մակերեսը գերազանցում է 25 հեկտարը և ստորֆի արդյունահանում, որտեղ կայանքի մակերեսը գերազանցում է 150 հեկտարը:

20. 220 կՎ կամ ավելի հզորությամբ և 15 կմ ու ավելի երկարությամբ բարձր լարման էլեկտրազծերի շինարարություն:

21. 200 000 տոննա և ավելի բենզինի, բենզոքսիմիկատի և քիմիական արտադրանքի պահեստներ:

### ▼M2

22. Սույն հավելվածում թվարկված նախագծերի ցանկացած փոփոխություն կամ ընդլայնում, եթե նման փոփոխությունը կամ ընդլայնումը որոշակի սահմաններում է՝ այդպիսի սահմանների առկայության դեպքում, նշվում է հավելվածում:

### ▼M3

23. «Ածխաթթու գազի ստորգետնյա պահեստավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն ([16](#)):

24. Սույն հավելվածով նախատեսվող կառուցվածքներից 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն՝ ստորգետնյա պահեստավորման համար նպատակներով CO<sub>2</sub> աղբյուրի աղբյուրահանման կառուցվածքներ կամ եթե CO<sub>2</sub> աղբյուրի տարեկան ընդհանուր աղբյուրահանումը հավասար է 1,5 կամ ավելի մեգատոննայի:

---

*ՀԱՎԵԼՎԱԾ II*

**4(2) ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՆԱԽԱԳԾԵՐԸ**

**1. Գյուղատնտեսություն, անտառաբուծություն և ջրային կուլտուրա**

- ա) գյուղական հողատարածքների վերակազմավորման նախագծեր,
- բ) ինտենսիվ գյուղատնտեսության նպատակներով չմշակված հողի կամ կիսաբնական տարածքների օգտագործման համար նախագծեր,
- գ) գյուղատնտեսության համար ջրային ռեսուրսների կառավարման նախագծեր, այդ թվում նաև՝ հողերի ոռոգման և դրենաժային նախագծեր,
- դ) նախնական անտառապատում և անտառահատում՝ հողօգտագործման մեկ այլ տեսակի անցնելու նպատակով,
- ե) խոշոր եղջերավոր անասունների համար ինտենսիվ կառուցվածքներ (I հավելվածում չընդգրկված նախագծեր),
- զ) ինտենսիվ ձկնաբուծություն,
- է) ծովից հողի հողաբարելավում:

**2. Արդյունահանող արդյունաբերություն**

- ա) քարհանքեր, բաց արդյունահանում և տորֆի արդյունահանում (I հավելվածում չընդգրկված նախագծեր),
  - բ) ստորգետնյա արդյունահանում,
  - գ) ծովային կամ գետային հողահանման միջոցով հանքարդյունահանում,
  - դ) խորը հորատումներ, մասնավորապես՝
    - երկրաջերմային հորատում,
    - միջուկային թափոնների և ռադիոակտիվ նյութերի պահեստավորման համար հորատում,
    - ջրերի պաշարների համար հորատում,
- բացառությամբ հողի կայունությունն ուսումնասիրելու համար հորատումներ:

ե) ածխի, նավթի, բնական գազի և հանքաքարի, ինչպես նաև թերթաքարի արդյունահանման համար վերգետնյա արդյունաբերական կառուցվածքներ:

### **3. Էներգետիկ արդյունաբերություն**

ա) Հոսանքի, շոգու և տաք ջրի ստացման համար արդյունաբերական կառուցվածքներ (I հավելվածում չներառված նախագծեր),

բ) գազ, շոգի և տաք ջուր կրելու, օդային գծերի միջոցով էլեկտրաէներգիայի փոխանցման համար նախատեսվող արդյունաբերական կառուցվածքներ (I հավելվածում չներառված նախագծեր),

գ) բնական գազի վերգետնյա պահեստարան,

դ) պայթուցիկ գազերի ստորգետնյա պահեստարան,

ե) հանածո վառելիքների վերգետնյա պահեստարան,

զ) ածխի և լիգնիտի/գորշ ածխի արդյունաբերական կաղապարում/բրիկետավորում,

է) ռադիոակտիվ թափոնների մշակման և պահեստավորման համար կառուցվածքներ (եթե ներառված են I հավելվածում),

ը) հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության համար կառուցվածքներ,

թ) էներգիայի արտադրության համար քամու էներգիան օգտագործելու նպատակով համար կառուցվածքներ (հողմակայաններ),

### **▼M3**

ժ) Սույն Հրահանգի I հավելվածով նախատեսված՝ կառուցվածքներից 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն՝ ստորգետնյա պահեստավորման նպատակներով CO<sub>2</sub>-ի հոսքերի որսման/կլանման կայանքները:

### **▼M1**

### **4. Մետաղների արտադրություն և վերամշակում**

ա) Ձուլակային երկաթի կամ պողպատի արտադրության համար կառուցվածքներ (առաջնային կամ երկրորդային հալում) այդ թվում նաև՝ շարունակական ձուլակաղապարում,

բ) սև մետաղների մշակման համար կառուցվածքներ,

i) տաք գլոցման արտադրամասեր,

ii) մուրճերով դարբնոցներ,



- iii) ձուլված մետաղի պաշտպանիչ պատվածքների կիրառում,
- գ) սև մետաղների ձուլման արտադրամասեր,
- դ) գունավոր մետաղների, բացառությամբ թանկարժեք մետաղների, այդ թվում՝ վերականգնված արտադրանքի (վերամշակում, երկաթապատում, և այլն) ձուլման, այդ թվում՝ լեգիրման համար կառուցվածքներ,
- ե) էլեկտրոլիտիկ կամ քիմիական գործընթացի կիրառմամբ մետաղների և պլաստիկ նյութերի վերգետնյա մշակման համար կառուցվածքներ,
- զ) մեքենաների շարժիչների արտադրություն և մեքենաների արտադրություն ու հավաքում,
- է) նավանորոգարաններ,
- ը) օդանավակայանների կառուցման և վերանորոգման համար կառուցվածքներ,
- թ) երկաթուղային սարքավորումների արտադրություն,
- ժ) պայթուցիկ նյութերով ջրասեղմումներ/ճզմումներ,
- ժա) մետաղական հանքանյութի վառման և թրծման համար կառուցվածքներ:

#### **5. Հանքարդյունաբերություն**

- ա) Կոքսի վառարաններ (ածխի չոր թորում),
- բ) ցեմենտի արտադրության համար կայանքներ,
- գ) ասբեստի արտադրության և ասբեստից ստացվող արտադրանքի արտադրության համար կառուցվածքներ (I հավելվածում չներառված նախագծեր),
- դ) ապակեթելք ներառող ապակու արտադրության համար կառուցվածքներ,
- ե) հանքային նյութերի հալման, ինչպես նաև հանքային թելքերի արտադրություն համար կառուցվածքներ,
- զ) վառման միջոցով կերամիկական արտադրանքի՝ մասնավորապես տանիքակղմիների, աղյուսների, կղմիներների, կերամիկայի կամ ֆարֆորի արտադրություն:

#### **6. Քիմիական արդյունաբերություն (I հավելվածում չներառված նախագծեր)**

- ա) Քիմիական նյութերի արտադրություն և միջանկյալ արտադրանքի մշակում,

- բ) պեստիցիդների և դեղագործական արտադրանքի, ներկերի ու լաքերի, էլաստոմերի և պերօքսիդների արտադրություն,
- գ) բենզինի, նավթաքիմիական և քիմիական արտադրանքի համար պահեստավորման կառուցվածքներ:

#### **7. Մննդի արդյունաբերություն**

- ա) Բանջարեղենի և կենդանական յուղերի ու ճարպերի արտադրություն,
- բ) կենդանական և բուսական ծագում ունեցող ու դրանցից ստացվող արտադրանքի փաթեթավորում և պահածոյացում,
- գ) կաթնամթերքի արտադրություն,
- դ) գարեջրաեփում և ածիկացում,
- ե) հրուշակեղենի և օշարակի արտադրություն,
- զ) կենդանիների սպանդի համար կառուցվածքներ,
- է) արդյունաբերական օսլայի արտադրության կառուցվածքներ,
- ը) ձկնամթերք և ձկնայուղի արտադրության գործարաններ,
- թ) շաքարի գործարաններ:

#### **8. Տեքստիլ, կաշվի, փայտի և թղթի արդյունաբերություններ**

- ա) Թղթի և տախտակի արտադրության համար գործարաններ (I հավելվածում չներառված նախագծեր),
- բ) թելքերի կամ տեքստիլ արտադրանքի նախամշակման կամ չորացման համար գործարաններ (այնպիսի աշխատանքներ, ինչպես օրինակ՝ լվացում, սպիտակեցում, ակալիացում),
- գ) կաշվի և մաշկի գունավորման գործարաններ,
- դ) ցելյուլոզի մշակման և արտադրման կայանքներ:

#### **9. Կաուչուկի արդյունաբերություն**

Էլաստոմերի վրա հիմնված արտադրանքի մշակում և արտադրություն:

#### **10. Ենթակառուցվածքային նախագծեր**

- ա) Արդյունաբերական տարածքների զարգացման **նախագծեր**,

- բ) քաղաքային զարգացման **նախագծեր**, այդ թվում՝ առևտրի կենտրոնների և ավտոկայանատեղիների շինարարություն,
- գ) երկաթուղիների և ինտերմոդալ բեռնահամալիրների և ինտերմոդալ բեռնափոխադրման տերմինալները (I հավելվածում չներառված նախագծեր),
- դ) օդանավակայանների շինարարություն (I հավելվածում չընդգրկված նախագծեր),
- զ) ճանապարհների, նավահանգիստների և նավահանգստային կառուցվածքների, այդ թվում նաև՝ ձկնորսական նավահանգիստների կառուցվածքների շինարարություն (I հավելվածում չներառված նախագծեր),
- է) I հավելվածում չներառված վերգետնյա ջրուղիների շինարարություն, կոյուղավորման և հորդացման նվազմանն ուղղված կառուցվածքներ,
- ը) երկարաժամկետ կտրվածքով ջուր պահելու կամ պահեստավորելու համար նախատեսվող պատվարներ և այլ կառուցվածքներ (I հավելվածում չընդգրկված նախագծեր),
- թ) տրամվայներ, վերգետնյա և ստորգետնյա երկաթուղիներ, կախովի գծեր կամ նմանատիպ այլ գծեր, որոնք բացառապես կամ հիմնականում օգտագործվում են ուղևորների փոխադրման համար,

### [▼M3](#)

- ժ) նավթի և գազի խողովակներ ու ստորգետնյա պահեստավորման նպատակներով CO<sub>2</sub> աղբյուրի փոխադրման կայանքներ (I հավելվածում չընդգրկված նախագծեր),

### [▼M1](#)

- ժա) երկար տարածության վրա ջրատարների համար կառուցվածքներ,
- ժբ) էրոզիայի դեմ պայքարելու համար ավազաբեր կառուցվածքներ և ծովային կառուցվածքներ, որոնք կարող են փոփոխության ենթարկել ավիր, կառուցելով, օրինակ՝ պատվարներ, պիրսեր/ոստնակներ, չորսուներ ու պաշտպանական պարիսպներ և այլ կառուցվածքներ՝ բացառությամբ այդ կառուցվածքների պահպանման և վերանորոգման,
- ժգ) գրունտային ջրերի դուրս բերման և ստորգետնյա ջրերի պաշարների արհեստական լրացման պլաններ, որոնք ներառված չեն I հավելվածում,
- ժդ) I հավելվածում չներառված գետի ավազանների միջև ջրային ռեսուրսների փոխանցման համար կառուցվածքներ:

## 11 Այլ նախագծեր

- ա) Շարժիչային փոխադրամիջոցի համար նախատեսվող մրցարշավի և փորձարկման համար խոչընդոտներով ճանապարհներ,
- բ) թափոնների հեռացման համար կառուցվածքներ (I հավելվածում չներառված նախագծեր),
- գ) կեղտաջրերի մշակման համար գործարաններ (I հավելվածում չընդգրկված նախագծեր),
- դ) կեղտի թաղման տեղանքներ,
- ե) մետաղի ջարդոնների, այդ թվում նաև՝ ջարդոնների վերածված փոխադրման միջոցների պահեստ,
- զ) մեքենաների, տուրբինների կամ ռեակտորների փորձարկման կառուցվածքներ,
- է) արհեստական հանքային թելքերի արտադրության համար կառուցվածքներ,
- ը) պայթուցիկ նյութերի վերականգնման կամ վերացման համար կառուցվածքներ,
- թ) սպանդանոցներ:

## 12. Զբոսաշրջություն և հանգիստ

- ա) դահուկների համար ճանապարհներ, դահուկորդների համար ամբարձիչներ և թեք վերելքով լարավոր ֆունիկուլյորներ և այլ հարմարանքներ,
- բ) ծովային հարմարանքներ,
- գ) քաղաքային տարածքներից դուրս ամառանոցային ավաններ և հյուրանոցային համալիրներ ու այլ կառույցներ,
- դ) մշտական վրանաշեն ավաններ և տուն-ֆուրգոնների ավաններ,
- ե) հանգստի այգիներ:

13. — I կամ II հավելվածում թվարկված նախագծերի ցանկացած փոփոխություն կամ ընդլայնում՝ արդեն թույլատրված, կատարված կամ իրականացման ընթացքում, որը կարող է շրջակա միջավայրի վրա զգալի բացասական ազդեցություններ ունենալ ► M2 «(I հավելվածում չընդգրկված փոփոխություն կամ ընդլայնում) ◀ ,

- I հավելվածի նախագծեր, որոնք բացառապես կամ հիմնականում նախաձեռնվել են նոր մեթոդների կամ արտադրանքի մշակման ու փորձարկման համար և որոնք չեն

կիրառվել ավելի քան երկու տարի:

---

4(3) ՀՈՂՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1. Նախագծերի բնութագրերը

Նախագծերի բնութագրերը կարող են դիտարկվել մասնավորապես ստորև նշվածի հետ կապված՝

- նախագծի մասշտաբը,
- այլ նախագծերի հետ խմբավորումը,
- բնական ռեսուրսների օգտագործումը,
- թափոնների արտադրությունը,
- աղտոտում և կեղտ,
- միջադեպերի ռիսկ, մասնավորապես, հաշվի առնելով օգտագործվող նյութերը կամ տեխնոլոգիաները:

2. Նախագծերի իրականացման վայրը

Աշխարհագրական տարածքների բնապահպանական խոցելիությունը կարող է ազդեցություն կրել այն նախագծերից, որոնք, մասնավորապես, պետք է համարվեն ստորև նշվածի մասով՝

- առկա հողօգտագործում,
- տարածքում բնական ռեսուրսների համեմատական ծավալ, քանակ և վերականգնողական կարողություն,
- բնական միջավայրի կլանման կարողություն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հետևյալ տարածքներին՝

—

- ա) ճահճացած հողեր,
- բ) ավազներ և գոտիներ,
- գ) լեռնային և անտառային տարածքներ,
- դ) արգելոցներ և զբոսայգիներ,

- ե) անդամ պետությունների օրենսդրության համաձայն դասակարգված կամ պաշտպանված տարածքներ, 79/409/ԵՏՀ և 92/43/ԵՏՀ հրահանգի համաձայն՝ անդամ պետությունների կողմից սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքներ,
- զ) տարածքներ, որտեղ արդեն գերազանցում են Համայնքի օրենսդրության մեջ սահմանված բնապահպանության ոլորտում որակի ստանդարտները,
- է) խիտ բնակեցված տարածքներ,
- ը) պատմական, մշակութային կամ հնէաբանական կարևորության լանդշաֆտներ:

### **3. Հնարավոր ազդեցության բնութագրերը**

**Նախագծերի** հնարավոր զգալի ազդեցությունները կարող են ուսումնասիրվել վերը նշված 1-ին և 2-րդ կետերում սահմանված չափանիշների հետ կապված և ստորև նշվածի հետ կախված՝

- ազդեցության մասշտաբը (աշխարհագրական տարածք և ազդեցություն կրող բնակչության չափը),
- ազդեցության միջսահմանային բնույթը,
- ազդեցության ծավալը և բարդությունը,
- ազդեցության հավանականությունը,
- ազդեցության տևողությունը, հաճախականությունը և հետադարձելիությունը:

---

5(1) ՀՈՂՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Նախագծի** նկարագրությունը, մասնավորապես, ներառելով՝
  - ընդհանուր նախագծի ֆիզիկական բնութագրի նկարագրությունը և շինարարության ու շահագործման փուլերում հողօգտագործման նկատմամբ ներկայացվող պահանջները,
  - արտադրական գործընթացների հիմնական բնութագրերի նկարագրությունը, օրինակ՝ օգտագործվող նյութերի բնույթը և քանակը,
  - առաջարկվող նախագծի իրականացման արդյունքում ակնկալվող մնացորդների և արտանետումների գնահատումը՝ ըստ տեսակի և քանակի (ջրի, օդի և հողի աղտոտում, աղմուկ, վիբրացիա, լույս, ջերմություն, ճառագայթում և այլն):
2. Նախագիծ մշակողի կողմից ուսումնասիրվող հիմնական այլընտրանքային եղանակների ուրվագիծ և տվյալ ընտրության համար հիմնական պատճառների նշում՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունները:
3. Շրջակա միջավայրի այն հայեցակետերի նկարագրություն, որոնք կարող են զգալի ազդեցություն կրել առաջարկվող **նախագծի** կողմից, այդ թվում նաև, մասնավորապես՝ բնակչություն, ֆաունա, ֆլորա, հող, ջուր, օդ, կլիմայական գործոններ, նյութական ակտիվներ, այդ թվում նաև՝ ճարտարապետական և հնագիտական ժառանգություն, լանդշաֆտ և վերը նշված գործոնների միջև փոխհարաբերություն:
4. Շրջակա միջավայրի վրա առաջարկվող նախագծի հնարավոր զգալի ազդեցությունների նկարագրություն ([17](#)), որոնք բխում են՝
  - **նախագծի** առկայությունից,
  - բնական ռեսուրսների օգտագործումից,
  - աղտոտիչների արտանետումից, կեղտի առաջացումից և թափոնների վերացումիցև շրջակա միջավայրի ազդեցությունները գնահատելու համար կիրառվող կանխատեսման մեթոդների՝ նախագիծ մշակողի կողմից նկարագրությունը:
5. Շրջակա միջավայրի վրա զգալի բացասական ազդեցությունները կանխելու, նվազեցնելու և, հնարավորության դեպքում, կասեցնելու համար նախատեսվող միջոցների նկարագրություն:



6. Վերը նշված վերնագրերի ներքո ներկայացվող տեղեկությունների ոչ տեխնիկական բնույթի ամփոփագիր:

7. Ցանկացած դժվարությունների նշում (տեխնիկական բացթողումներ կամ «նոու-հաու»-ի բացակայություն), որոնց բխվում են նախագիծ մշակողները՝ պահանջվող տեղեկությունները բավարարելիս:

---

1) ՊՏ ԹԻՎ C 169, 09.07.1980թ., էջ 14:

2) ՊՏ ԹԻՎ C 66, 15.03.1982թ., էջ 89:

3) ՊՏ ԹԻՎ C 185, 27.07.1981թ., էջ 8:

4) ՊՏ ԹԻՎ C 112, 20.12.1973թ., էջ 1:

5) ՊՏ ԹԻՎ C 139, 13.06.1977թ., էջ 1:

6) ՊՏ ԹԻՎ C 46, 17.02.1983թ., էջ 1:

7) ՊՏ ԹԻՎ L 257, 10.10.1996թ., էջ 26:

8) ՊՏ L 41, 14.02.2003թ., էջ 26:

9) Սույն Հրահանգը անդամ պետություններին ծանուցվել է 1985 թվականի հուլիսի 3-ին:

10) Ատոմակայանները և այլ միջուկային ռեակտորներ դադարում են այնպիսի կառուցվածք լինելուց, որտեղ բոլոր միջուկային վառելիքները և մյուս ռադիոակտիվ նյութերով աղտոտված տարրերը պարբերաբար հեռացվել են կառուցվածքի տեղանքից:

11) Սույն Հրահանգի նպատակներով «օդանավակայան» նշանակում է այնպիսի օդանավակայաններ, որոնք համապատասխանում են «Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն հիմնելու մասին» 1944 թվականի Չիկագոյի կոնվենցիայի սահմանմանը:

12) Հրահանգի նպատակներով «ձեպընթացների համար նախատեսվող ճանապարհ. նշանակում է այնպիսի ճանապարհ, որը համապատասխանում է 1975 թվականի նոյեմբերի 15-ի Հիմնական միջազգային ավտոտրանսպորտային մայրուղիների մասին եվրոպական համաձայնագրի սահմանմանը:

[13.\)](#) ՊՏ Թիվ L 194, 25.07.1975թ., էջ 39. Հանձնաժողովի 94/3/ԵՀ որոշմամբ վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ Թիվ L 5, 07.01.1994թ., էջ 15):

[14.\)](#) ՊՏ Թիվ L 377, 31.12.1991թ., էջ 20: Թիվ 94/31/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ Թիվ L 168, 02.07.1994թ., էջ 28):

[15.\)](#) ՊՏ Թիվ L 135, 30.05.1991թ., էջ 40: 1994 թվականի Անդամակցության ակտով վերջին անգամ փոփոխված հրահանգ:

[16.\)](#) ՊՏ L 140, 05.06.2009թ., էջ 114:

[17.\)](#) Սույն նկարագրությունը պետք է ներառի նախագծի ուղղակի և ցանկացած անուղղակի, երկրորդային, կուտակային, կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ, մշտական և ժամանակավոր, դրական ու բացասական ազդեցությունները: